

**ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ, ՅԱՐԱԿԻՅ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՎ**

Մեր վիճակը Մայր Եկեղեցի չունի, Առաջնորդարան չունի, Ազգային Մասնադարան չունի, բարձր դպրոց չունի: Ժամանակը հասել է, որ այս մասին մտածենք, հիմնադրամ կազմելու հետզհետե այս անհրաժեշտ կարիքները լրացման համար: Ուրախ ենք, որ Նիւ Եորքի Լուսաւորչի Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն էլ մտածում է եկեղեցի ձևաք բերելու ուղղութեամբ: Բայց այս միայն Լուսաւորչի Ժողովրդի զորքը չէ, եւ ինչպիսի միայն եկեղեցի սենեակը չէ, այլ զորա հետ նաեւ Առաջնորդարան, Ազգային Տուն իւր յարակից բաժանմունքներով, որ «օջախ» եւ հնոց դասնայ մշտավատ յոյս եւ ջերմութիւն սփռելու եկեղեցւո: Հոգեւոր գաւառները մէջ ամբողջ առաջնորդութեան տարուղութեամբ: Այժմ մեր ստաճարին է, որ Երեսփոխանական ժողովը սկզբունքով ընդունէ եւ յանձնարարէ Առաջնորդարանին այդ ուղղութեամբ աշխատանք սկսել:

(Առաջնորդի գեկայց Ազգային Երեսփոխանական Ժողովին 1942 Նայ. 7-Տ, Իրավիսէնս)


TO BE RETURNED TO THE  
PUBLICITY FILE

Diocese of the Armenian Church  
830 Second Avenue, N. Y. C. 10010

*File: Armenian Clergy*

**ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ**

*Catholicos Garegin Hovsepian*



**CATHOLICOS GAREGUIN  
HOVSEPAINTZ**

**ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ**

CATHOLICOS GAREGUIN  
HOVSEPAINTZ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ,  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՂԻԿԻՈՑ ԵՐԱՆՍՇՆՈՐՀ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ  
ՄԱՀՈՒԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԳ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱԹԹԻԻ,  
ՆԻԻ ԵՈՐՔ, ՅՈՒՆԻՍ 10, 1962

*Published by  
The Diocese of the Armenian Church of America  
to commemorate the tenth anniversary of the passing of  
the beloved Gareguin Catholicos of the Illustrious House of Cilicia.  
New York, June 10, 1962*



Նորին Սուրբ Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Կարողիկոս Յովսէփեանց



ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՎԱՄՕՔՆ ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՒՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՂԿԻՈՅ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ  
ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՅՈՑ,  
ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,  
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ  
ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ  
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայաստանեայց Եկեղեցին քրիստոնէական փառաւոր եւ հը-  
ղօր եկեղեցիներէն մին է, իր հրաշափառ ծնունդով ու իր երկհա-  
ղարամեայ պատմութեամբ եւ մեծադարձ հայրապետներով ու  
տաղանդաշատ վարդապետներով, որոնք իրենց տաքինի վար-  
քով, կեանքի սուրբ գործերով եւ հարուստ փառատեղով՝ մեր լոյս  
հաւատքին, մեր ազգային գիտակցութեան ու մշակոյթին լուսա-  
շող ջահերը կը հանդիսանան, հայ ժողովուրդի բազմադարեան  
կեանքը ճանապարհին վրայ:

Մեր դարուն, հայ եկեղեցական մեծ դէմք մը եւ նման լուսաշող ջահ մը հանդիսացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Հայրապետը՝ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանց, որ Իր աչքերը փակեց Անթիլիասի մէջ:

Տասը տարիներ անցան այդ օրէն: Տարիներ շարունակ, Գարեգին Հայրապետը լուսաւորեց ու փառաւորեց Տանն Կիլիկիոյ պանդուխտ Աթոռը, Իր հոգևոր եւ իմացական բացառիկ շնորհներով եւ հայրենասիրական բոցավառ շունչով:

Հանգուցեալ Հայրապետը մեծ անձնաւորութիւն մըն էր իրրեւ հաւատաւոր ու ներշնչած հոգեւորական, որ Իր շուրջիններուն եւ համայն մերադէմ ժողովուրդին բուռ-բուռ բաշխեց Ս. Աւետարանի լոյսը՝ հուր խօսքերով, հուր աւիւնով:

Համակ ուղի էր Ան, անսպառ եռանդ ու փայլատաակող սուրբ մտածում:

Գարեգին Հայրապետ գիտական պայծառ միտք մըն էր արդիական ըմբռնումով, որ լոյս սփռեց նաեւ Իր ուսումնասիրած կալուածէն ներս, հայ մասննադրութեան ժառանգ թողլով մըշտական արժէք ներկայացնող աշխատութիւններ: Հայ հին եկեղեցական արուեստին եւ մանրանկարչութեան նուիրումը Իր դործերը պիտի մնան վստահական հեղինակութիւններ, այժմ եւ միշտ:

Գարեգին Կաթողիկոս մեծ եղաւ նաեւ իրրեւ եկեղեցական դործիչ եւ հայրենասէր հոգեւորական: Իր ամբողջ կեանքը Ան նուիրեց Հայ Եկեղեցիին եւ Հայ Հայրենիքին, Ազգի գերազանց շահերու բիւրեղացեալ գիտակցութեամբ:

Աւելի քան կէս դար շարունակ, այս գիտակցութեամբ տըքնեցաւ ու պայքարեցաւ, Իր արդար հոգիով կուրծք տալով ամէն աւեսակի յարձակումներուն եւ հալածանքներուն:

Հերոսացաւ Սարգարապատի ճակատին վրայ, ու ապա այլ պայմաններու մէջ, նոյն մարտը շարունակեց Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ բազմած, նոյն ոգեկշնչումով, նոյն սղոյալին հայրենասիրական գիտակցութեամբ: Մեր դարու հայոց պատմութեան էջերուն վրայ, Իր անունը սակի տառերով քանդակուած պիտի մընայ իրրեւ ախոյեան իրաւ հայրենասիրութեան եւ հայ եկեղեցական միասնութեան:

Մեծ Հայրապետի յիշատակը, Անոր կեանքի ու դործի ուղին, եկեղեցուէն ու հայրենանուէր փաստաւոր օրինակ մը կը հանդիսանան ըստը հայ հոգեւորականներուն համար, որոնք կ'ուզեն հաւատարիմ մնալ իրենց ուխտին եւ իրենց ժողովուրդին:

Իր հայեացքը սեւեռած միշտ դէպի վեր, միշտ դէպի պայծառ հորիզոնները ոգեկան աշխարհներու, Գարեգին Հայրապետը Իր ներշնչումը տեւապէս կը ստանար Փրկչի Իջման Ս. Սեղանէն եւ Հայոց Աշխարհի երկնամերձ լեռներէն: Հայրենի Հոգին ձայնն էր, որ Իր սրտին մէջ կը արտփէր: Իր ամբողջ էութեամբ, Ան կը սիրէր ու կը պաշտէր իր հարազատ, չարքաչ ժողովուրդը եւ Մայր երկիրը Հայաստան: Կը սիրէր Հայաստանեայց Եկեղեցին իրրեւ Հայ Ազգին հրաշալի ձեռակերտը եւ երկիրաւորութեամբ կը պաշտէր, ուր սր ալ գտնուէր, աստուածակառոյց Ս. Էջմիածինը ամենայն հայոց: Գարեգին Կաթողիկոս տարիներ շարունակ Ս. Էջմիածնի անշէջ լոյսով կեանք տուաւ Կիլիկիոյ Աթոռին ու շէն պահեց պայն:

Մեծանուն Հայրապետը աւելի քան որեւէ հայ հոգեւորական, մտքի ու հոգիի գմայլելի պայծառութեամբ ու ջերմութեամբ բիւրեղացուց ու ամբաստնեց ազգային-եկեղեցական միասնութեան ուղին, այդ ուղին դաւանելով իբրեւ գերազանց գրաւակունք՝ ի սիրտս աշխարհի ցրուած պանդուխտ մեր ժողովուրդի կեանքի անվասն պահպանման: Այսօր ալ, կեանքի միւս ափէն, Ան կը շարունակէ մեզ լուսաւորել, զօրացնել ու աւաջնորդել: Կը շարունակէ նաեւ յորդորել ու սասանել բոլոր անոնք, որոնք կը շնորհը Իր գծած ուղիէն ու կը թափառին կորստեան ճամբաներու վրայ:

Տասը տարիներ անցան Իր մահէն, սակայն Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց կենդանի է մեր կեանքին մէջ, մեր հոգիներէն ներս, եւ Իր անունը սուրբ կը պահուի Ս. Էջմիածնի լոյսերուն մէջ:

Ու բազմած է Ան մանաւանդ Երեւանի Մատենադարանի Իր աթոռին վրայ, ստաւել փառքով քան որեւէ այլ տեղ:

Կուսարնակ Հայրապետը է՛ եւ պիտի մնայ՝ ըստը գալիք սերունդներուն համար՝ բոցաշունչ պատգամ մը եւ լուսեղէն ճանապարհ մը:

«Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող» (Խորենացի):

Ի Տէր հանգուցեալ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Յովսէփեանցի մահուան տասներորդ տարիիցի աւթիւ, կը հրահանգենք մեր բոլոր նուիրապետական Աթոռներուն, թեմակալ սասնորդներուն եւ եկեղեցական ազգային իշխանութիւններուն՝ Հոգեհանգստեան պաշտօն կատարել այս տարուան յունիսի 10-ին, Ս. Հոգւոյ Պալատեան տօնին, եւ ողևկուել յիշատակը մեծ Հայրապետի կեանքին ու դործին:

Թող մեր ամէնուս սրտերուն մէջ եւ Հայ Եկեղեցւոյ կամար-  
ներուն տակ միշտ պայծառ մնայ մեծագործ Հայրապետի նուր-  
բական անունը:

Յաւէրժական լո՛յս եւ խաղաղութի՛ւն իր անմահ հողոյն:  
«Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ ելլիցի»:

Վ.Ա.ԶԳԻՆ Ա.  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 12-ն մարտի  
1962 Փրկչական ամի,  
և ի տուժարիս Հայոց ՌՆԺԱ,  
ի մայրաքաղաք Սրբոյ Էջմիածնի:  
Հմր. 440

### ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Տարւոյս Յունիս 10-ին, կը լրանայ Մեծի Տանն Կիլիկիոյ հանդուցեալ  
Կաթողիկոս Երջանկայիչատակ Տ. Տ. Գարեգին Յովսէփեանցի մահուան տաս-  
նամեակը:

Այս առթիւ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Նորին Ս. Օծու-  
թիւն Տ. Տ. Վարդէն Ա. իր Մարտ 12 թուակիր Սրբատառ կոնդակով՝ կը հը-  
րահանդէ, «Մեր բոլոր նուիրապետական Աթոռներուն, Թեմակայ Առաջնորդ-  
ներուն եւ Եկեղեցական-Ազգային իշխանութեանց՝ հոգեհանգստեան պաշտօն  
կատարել այս տարուան Յունիսի 10-ին, Ս. Հոգւոյ Գալստեան Տօնին, եւ ս-  
ղեկոչել յիշատակը մեծ Հայրապետի կեանքին ու դործին»:

Արդ՝ նկատելով որ երջանկայիչատակ Գարեգին Կաթողիկոսը եղած է նա-  
և Ամերիկահայոց թեմի քաղաքացիաւ եւ մեծագործ Առաջնորդներէն մին,  
այսու, կը հրահանգենք մեր վիճակի հոգևոր հովիտներուն, որ Յունիս 10-ի  
կիրակին, բացառիկ եւ հանդիսաւոր Ս. Պատարապոյ կը հոգեհանգստեան  
կարգով յարգեն յիշատակը մեծանուն Հայրապետին, Ս. Խորանէն կարգա-  
լով Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը եւ քարոզի նիւթ զարձնեն  
անոր եկեղեցանուէր սեւ աղլանուէր բարձրալին կեանքն ու դործը, իբրեւ  
առաքելաւոր Հայրապետ մը, իբրև մարդաբնաշուք քարոզիչ մը, իբրև  
սակեղրիչ մատենագիր մը, իբրև արուեստասէր զիտնական մը եւ շինարար  
ու իմաստուն Առաջնորդ մը:

Կը թելադրենք մեր թեմի բոլոր համայնքներուն մէջ կազմակերպել յի-  
շատակի հանդէսներ՝ նուիրուած մեծանուն երջանկայիչատակ Գարեգին Հայր-  
ապետի անձին ու դործին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ ելլիցի»:

Տիրաւանդ սիրոյ սղջունիւ  
Մնամք Աղօթարար  
ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Ապրիլ 11, 1962 Նիւ Եորք

### ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳԻԾԵՐ)

Բարեյիշատակ Սրբազանը՝ աւագանի անունով ալ Գարեգին, ծնած է  
1867, Դեկտեմբեր 17-ին, Հին Արցախի Ղարաբաղի կամ Խամսայի Մեյիբու-  
թեան Զրամբերդի գաւառի Մաղաւուզ գիւղը: Վեց-եօթ տարեկանին՝ իր ծը-  
նողքը կը վերադասնան հայրենի գիւղը՝ Մարապա, որ Պարսկաստանի Ուր-  
միա եւ Սարմատ գաւառներէն եկած գաղթականներով հաստատուած էր  
1828-ին, Ռուս-Պարսկական պատերազմէն յետոյ:

Յօրը անունն էր Վարդեա Կարապետ, իսկ մօրը՝ Խորսով, որ նոյնն է  
Խորսովիդախտ անունն հետ: Մայրը ունեցած է վեց դուստր: Իրմէն յետոյ  
երեք քոյրեր՝ Մինախանուժ, Նաչիտն եւ Անուշ: Մականունը կուգայ հօրե-  
նական Պապ՝ Յովսէփէն, իսկ մօրենականը Հախիկըղեանց էր: Գեղարուես-  
տական ճաշակը ժառանգեր է հօրմէն, որ գեղեցիկ դուզուկ եւ քամանչա  
նուագող լեզու է:

Մօրը հօրեկրայր Անտոն Վարդապետ, որ Վարդապետանց կը ստորագր-  
րէր, կնոջ մահէն ետք Մաղաւուզի վրայով կ'երթայ Գանձասար վանքը՝ մի-  
արանելու, փոքրիկն Գարեգինի կը բերէ ալբանարան մը, ուրկէ աստղին ու-  
սումը կը ստանայ գիւղի խանութպան Ասլան Ապէրի մօտ: Գիւղին մէջ վեր-  
ջին ուսուցիչը կ'ըլլայ «լիտական» քահանան՝ Տէր Զաքարիա, որ ժամանակի  
հասկացողութեամբ ուսումնական էր:

Մօր հօրեկրոր կարգադրութեամբ կը մտնէ Ամարասի վանքը, ուր կը մը-  
նայ ասոր ամիս, կը մասնակցի երկեսիան ժամերգութեանց եւ գոց կը սոր-  
վի Եկեղեցին: Հետեւեալ տարին Անտոն Վարդապետ գինը կը փոխադրէ Շուշի  
Հոգևոր Դպրոցը, սրան ալիւրը հայրը կը հայթայթէր: Տարի մը յետոյ կը  
ստիպուի ընդհատել ուսումը, որովհետեւ Անտոն Վարդապետ կարող չըլլար  
հոգայ իր ուսման եւ աղլուստին բոլոր ծախքերը: Անտոն Վարդապետ գինը  
կը գնէ Զրամբերդ գաւառի ամենէն մեծ գիւղի՝ Կուսապատի գաղթոցը, որ իր  
բախտէն քանի մը ամիսէն կը գոցուի:

Սակայն տարին չըրացած, Անտոն Վարդապետ կը կարգադրէ որ պատա-  
նի Գարեգին գարձեալ մտնէ Շուշի գաղթոցը: Մայիսին կը վերադասնայ Մա-  
ղաւուզ գիւղը, եւ եղած ինդրանքին ընդատաջ երթալով՝ ուսուցիչ կ'ըլլայ  
նոյնիսկ իրմէն մեծ աշակերտներու, սրանց կ'ըլլայ խաղակից, որովհետեւ  
ինք այն ժամանակ հազիւ 14 տարեկան կար:

### ԳԻՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՁ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

1882-ին, Անտոն Վարդապետ Գլխորդ Գ. Կաթողիկոսի կողմէ Էջմիածին կը  
հրաւիրուի, եւ ամռան հրակը կը արուի պատանի Գարեգինին՝ Էջմիածին  
երթալու, որովհետեւ հարաւորութեան պիտի ունենար Գլխորդեան ճեմարան

This page is sponsored by  
AVAKIAN BROS. INC.

ընդունուելու : Չորս օր բեռան կասքով ճամբորդելով կը հասնի Էջմիածին , բեռը ուտին , հնամաշ աշակերտական հալոստով :

Զինք կը տեղափոխեն առաջին դասարանը եւ քանի մը ամիս յետոյ , երբ կը տեւանուի որ ինք աւելի պատրաստութիւն ունի , կը փոխադրեն երկրորդ դասարանը : Եւ տարուան վերջը ամենէն կարող աշակերտներէն մին կը հան- ղիսանայ ու կ'ընդունուի ղիշերօթիկ՝ Անտոն Վարդապետի եւ Տեղակալի բա- րերարութեամբ :

Միջնակարգ դպրոցը կ'աւարտէ 1887-ին եւ նոյն տարին կը մտնէ լսարան ձեւարանը կ'աւարտէ 1890-ին : Իրեն պատակից կ'ունենայ հետագային յայտ- նի դարձած՝ Մանուկ Արեղեան , Ստեփան Կանայեան , Աւետիս Ահարոնեան , Լեւոն Շանթ , Աւետիք Իսահակեան եւ աւելի յետոյ՝ Վոսափեան , Կարապետ Վարդ . Տէր Մկրտիչեան , Տիրայր , Յուսիկ , Գէորգ եւ Գարեգին Արքեպիսկո- պոսներ :

Ուսումնական տարւոյ վերջին ամիսներուն (1889) Արչակ Նահապետեան , Կարապետ Տէր Մկրտիչեան (վերակացու ձեւարանի) , Գէորգ Զէտրէքճեան եւ Գարեգին Յովսէփեան կ'ուխտեն նուիրուիլ եկեղեցւոյ ծառայութեան եւ սարկաւազ կը ձեռնադրուին Ներսէս Ապս . Խուտուերտեանի ձեռքով Գայիա- նէի վանքին մէջ :

Գեոեոս ուսանող վե Սարկաւազ՝ 1890-ին կը գրէ իր առաջին յօդուածը՝ «Ս . Լուսաւորիչ եւ Հայաստանեայց Ս . Եկեղեցին» վերնադրով՝ Արարատի Մարտի համարին մէջ : Յօդուածը , որ կը կարդայ Մակար Կաթողիկոս , Վե- հարան կը կանչէ հեղինակը եւ օրհնութիւն ու խրատուսական խօսքեր կ'ըսէ անոր :

Մէկ տարի կը ծառայէ իրրեւ Սարկաւազ եւ իրրեւ ուսուցիչ՝ ղիշի գրպ- րոցին մէջ , եւ յետոյ տարանի մէջ տպուած ղիշերու սրպէս սրբադրիչ : Նոյն շրջանին , ժողովրդական բանասիրութեան իր հաւաքած նիւթերը երկու հա- տորով — «Մասմայ Ծոներ» եւ «Փշրանքներ ժողովրդական բանասիրութիւ- նից» — կը տպագրուի Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան կող- մէ , արժանանալով 300 օտուրի մրցանակարաչութեան : Այս երկու գործե- րը պատճառ կ'ըլլան որ Գարեգին Սարկաւազ ընդունուի իրրեւ սան , Կոմկաս- եան Բարեպօրծական Ընկերութեան , արտասահման գրկուելու , որպէս աստ- ուածարանութեան ուսանող :

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ ԳԵՐՄԱՆՈՅ ՄԷՋ**

Մակար Կաթողիկոսի մահէն յետոյ Տեղակալութեան պաշտօն կը վարէ Երեմիա Արքեպիսկոպոս : Այդ ժամանակ Ս . Էջմիածնի մէջ կը զուճարուի կա- թողիկոսական ընտրութեան ժողով , ուր կ'ընտրուի Խրիմեան Հայրիկ : Օր- մանեան Եպիսկոպոս ճարպիկութեամբ որպէս կատարուած իրողութիւն Գա- րեգին Սարկաւազը արտասահման սպարկելու , կը շնորհաւորէ Տեղակալին , իր գեղեցիկ վճռին համար , թէ սրտած է Գարեգինը արտասահման գրկել : Ա-

This page is sponsored by  
MR. & MRS. EDWARD G. BASHIAN

տիկա պատէւ պիտի բերէ ձեզի եւ օգտակար կը լինի Մայր Աթոռին համար : Ան ալ կը հաւատուէ թէ «երկատարը է , սեղում ենք սեղարկել , Եկեղեցուն օգտակար կը լինի» :

Գարեգին Սարկաւազ Պերլին կը հասնի Օգոստոս 3 , 1892-ին եւ հին ու- սանող միաբանակից ընկեր Կարապետ Սարկաւազի թերազութեամբ ուսանող կ'արձանագրուի Լայպցիկի համալսարանին մէջ : Երկու տարի Լայպցիկի եւ երկու քուկէս տարի ալ Հայէի եւ Պերլինի համալսարաններուն մէջ կ'ուսանի աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան պատմութեան ճիւղերը , իրեն ուսուցիչ ունենալով Լայպցիկի մէջ Հայրիկէ՝ Նոր Կտակարանի , Գութէ՝ Հին Կտակարանի , Հասուք՝ Եկեղեցական Պատմութեան , Վուսի՝ Փիլիսոփա- յութեան : Հայէի մէջ Լոքս՝ դասուանողութեան պատմութեան : Պերլինի մէջ Գաթթեան՝ Փիլիսոփայութեան : Հասանք՝ դասուանողութեան պատմութեան : Յետ քննութեան 1897-ի սկիզբը կը ստանայ Փիլիսոփայութեան Տոքթորի (ՓՀ . Տ .) Աստիճան , իբրեւ աւարտական թէյ ներկայացնելով՝ «Մի Կամքի Վարդապետութեան Ծաղման Պատմութիւնը» :

Կայցելէ եւ երկու քուկէս ամիս կ'ուսումնասիրէ Վեթֆալիայի Բիլլ- Ֆիլիա քաղաքին մօտ Բրիտանական Գիթութեան եւ բարեսիրական մեծ հաս- տատութիւնը եւ 1897 թուին «Արարատ»ի մէջ կը հրատարակէ «Եկեղեցին եւ աղքատները իննամատարութեան զործր» յօդուածաւարքը :

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉԸ**

Էջմիածին կը վերագտնայ 1897-ին եւ նոյն տարւոյ Նոյ . 30-ին կուսա- կրթօն քահանայ (արեղայ) կը ձեռնադրուի Սուքիաս Արքեպս . Պարզեանի ձեռքով , Գայիանէի վանքին մէջ : Այդ Սեպտեմբերին կը հրատարակէ ձեւա- րան՝ դասախօսի պաշտօնով :

Շատ աւելի դասեր եւ առարկաներ կ'ընդունի , քան իր նուազ եւ նազուկ աստղական վիճակը կրնայ ներել : Ստիպուած չափէն աւելի կ'աշխատի , ս- բուն հեռեանքով երկրորդ տարին նեարդային հիւանդութիւն կ'ունենայ եւ բժիշկներուն խորհուրդով կը ստիպուի ուսումնական աշխատանքը ընդհատել ու Խրիմեան Հայրիկի կարգապարտութեամբ կ'ընդունի Թիֆլիսի Ս . Սարգիս վանքի վանահայրութիւնը եւ Թեմական Կեդր . Խորհուրդի աւագ անդամու- թեան պաշտօնը՝ Գէորգ Ա . Կաթողիկոսի առաջնորդական շրջանին :

**ԱՌՈՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈՒՍՆՈՐԴ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ**

Քանի մը ամիս յետոյ Խրիմեան Հայրիկ յետ կը կոչէ Գէորգ Արքեպս . Սարկեանը Վրաստանի առաջնորդութեան պաշտօնէն եւ Գարեգին Արեղային կը նշանակէ առաջնորդական փոխանորդ , սրբ կը վարէ մօտաւորապէս մէկ ու կէս տարի (1906 - 1907) : Այդ պաշտօնը սրբէ տեսակներով ալ իրեն հա- մար օգտակար կ'ըլլայ : Թիֆլիս մատուրական կեդրոն ըլլալով՝ ասիթ կ'ու- նենայ չիւրմ պահելու առաջնակարգ մատուրականներու եւ գրողներու հետ :

This page is sponsored by  
MR. & MRS. GEORGE G. BASHIAN

Որոշ երեկոյ մտաւորականներ իր բով կը հասարակին: Փոխն ի փոխ մէկը կամ միւսը դասախօսութիւն կ'ընէ, զիտական, զբական, հասարակական, կամ կը կարգայ իր նոր դրած ստեղծարարութիւնը եւ մտքերու փոխանակութիւն կ'ըլլայ տրուած նիւթին մասին եւ ապա սեղանին շուրջ կը հասարակին ընթացիկ: Ատոնցմէ կ'արժէ յիշել Ղարաբոս Այալեան, Յովհաննէս Թումանեան, Արասխանեան («Մուրճ»ի խմբագիր), Մուրացեան, բժշկապետ Բաբայան, Առաքելեան Համբարձում եւ այլն: Ի միջի այլոց Յովհաննէս Թումանեան կը կարգայ առաջին անգամ իր «Մասունցի Դաւիթ»ը:

Այս հանգամանքը շատ կը նպաստէ Գարեգին Աբելայի ժողովրդական լինելուն, նաեւ քարոզներով ու դասախօսութիւններով կը վայելէ լայն համակրութիւն: Ժողովուրդին մէջ միաք մը կը ծաղի առաջնորդ ունենալ զինքը եւ հարիւրաւոր մտաւորականներ, վաճառականներ, ուսուցիչներ աչքի բացառելի կ'ուզարկեն Էջմիածին՝ Խրիմեան Հայրիկէն ինչպէս որ Գարեգին Աբելայի Առաջնորդ ըլլայ: Սակայն, 1902-ին կաթողիկոսը Էջմիածին կը կանչէ զինքը: Երևանի թեմական պարոցի հոգարարութիւնը առաջնորդին հետ 1902-ին զինք կը հրաւիրէ ընդունիլ թեմական պարոցի տեսչութեան պաշտօնը, որ կը շարունակէ մինչեւ 1905 թուականը:

**ԳԵՈՐԳԻԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Կը նշանակուի (1905) վերատեսուչ Գլխորդեան ձեմարանի, ուր միաժամանակ կը դասաւանդէ աստուածաբանական եւ հնարարական ճիւղերու աւարականներ: Կ'ըլլայ խմբագրատեղ (1906-1907) Մայր Աթոռի «Արարատ» պաշտօնաթերթին, որուն կը բերէ մնայուն իր աշխատակցութիւնը: Խրիմեան Հայրիկի վախճանումէն ետք (1907) կը նշանակուի վանահայր Ս. Հովիթսի միջին վանքին, իսկ Մատթէոս Իգմիւրեանի կաթողիկոսութեան շրջանին՝ խորհրդակցական աշխատանք կը շարունակէ իր իրաւունքները, որ հոգային վանքի պատճառով ուստաղաւանութեան զխմած էր:

Կը մասնակցի Գաւնիի Տրդատայ Թախտի պեղումներուն՝ իրբեւ անգամ Պրոֆ. Մասի կողմած զիտական արշաւանքին: Կը գտնէ Տրդատ թաղաւորի յանդերձն մէկ արձանագրութիւնը Քասախ գետի սկզբնական մաս: Պրոֆ. Մասի առաջարկով կ'ընդունուի որպէս իսկական անգամ Կոստանական Հրատարական Ընկերութեան:

Կը ճամբորդէ (1911) զէպի Երուսղէմ եւ Պալին՝ ընկերակցութեամբ նըկարիչ Եղիշ Թաղէոսեանի, որ կ'արտասնկարէ Ս. Յակոբեանց վանքի եւ Պոլսոյ Այդ. Մատենագրարանի կարեւոր ձեռագիրներէն ոմանց մանրանկարները, ի մասնաւոր թաղաւորական եւ իշխանական զիմանկարները, որոնց բոլորը մաս պիտի կազմէին իր հոգակալ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԷԶ աշխատասիրութեան: Իսկ միւս կողմէն կ'ուսումնասիրէ գրչարական ու մանրանկարչական արժէք ունեցող ձեռագիրները միաժամանակ արտագրելով ա-

This page is sponsored by  
MR. & MRS. DADOUR DADOURIAN

նոնց յիշատակարանները, որոնք նիւթ պիտի տային ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԶԵՆՈՒԳՐԱՅ մեծարժէք գործին շարքին:

Կը պաշտպանէ Օրմանեանի կաթողիկոսական թեմաւորութիւնը, որուն համար կը հրատարակ յատուկ զբօսիչ մը: Գիրքերու Գիտի հարարչինգհարիւրամեակին առիթով կը հրատարակուի ՇՈՂԱԿԱԹ մեծ հասարակութիւն, որուն խմբագիրներէն մին կ'ըլլայ: Կը կատարէ հնարարական ճամբորդութիւններ՝ կատարելով հետազոտութիւններ որոնցմէ մաս մը կ'ամփոփուի եռահատոր իր գործին մէջ՝ ԽԱՂԻՍԱԿԵԱՆՔԻ ԿԱՄ ՊՈՌՇԵԱՆՔԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄ ՈՒԹԵԱՆ մէջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին կ'անցնի Պերլին՝ ապազբնու համար իր կարեւոր երկր՝ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԷԶ, որուն համար կ'անհրաժեշտ կուտայ 5000 մարք: Սակայն, պատերազմը սկսելուն՝ կը ստիպուի վերադառնալ Էջմիածին՝ Պալին-Մամսուն-Ամասիա-Թոքատ-Արատի գիծով, եւ ուսումնասիրելով Հայոց Կեղեցիներու մէջ պահուած ձեռագիրներն ու հնարարութիւնները: Կը հասնի մինչեւ Խանդավազ, ուրիշ կը ստիպուի անցնիլ Էջմիածին, եւ կը ստանձնէ ձեմարանի վերատեսուչութիւնը՝ նրա մինչեւ անոր փակումը (1917), անոր ի նպաստ կատարելով 180,000 սորլիի հանդանակութիւն մը:

**ԵՊԻՍԿՈՊՈՍՍՅՈՒՄ**

Որպէս վարձատրութիւն իր ծառայութեանց՝ Գարեգին Վարդապետ 1917 Մայիսին՝ Գլխորդ Զեմարանի եւ Տրդայ Երուսղէմեան վարդապետներուն հետ եպիսկոպոս կը ձեռնադրուի Գլխորդ Ե. Կաթողիկոսին: Յաջորդ տարի Մայիս 23-ին սեպի կ'ունենայ Սարգստապատի ձեռնադրութիւնը, որուն կը բերէ գործօն մասնակցութիւն, որպէս նոր օրերու Դեւոն Երէց, վարդապետ խորամ խորամ եւ խորախոսելով հայ արեւելքը: Իր յուշարեւած արիւթեան համար կը պարգևատրուի քաջութեան ԳԵՈՐԳԻՆՍԿԻ բարձր շքանշանով: Կարսի անկումին՝ որպէս բանագնաց՝ կ'աղտակ պաշարուած հայ ժողովուրդը վերահաս ջարդի Զանգարատի շրջանի հայ կատարելութիւնը կը զարդարէ իր կուրծքը Սպայից Քաջութեան Ապրտակ Խաչի համարժէք ժապաւնով:

Կը բացուի (1920) Երևանի Համալսարանը, ուր կը կարգուի ուսուցչատեղ հայ արտեստի եւ հնարարութեան ամպլոններուն: Եսին թուականներուն կը գործակցի ճարտարագետ Այ. Թումանեանի եւ Ալխարբէկ Քալանթարի, որոնց հետ կը կազմէր երբորդ անգամը Հայաստանի Հնարարական Պահպանութեան կամիտէին:

**1921 - 1934 ՇՐՋԱՆ**

Կը նշանակուի (1921) Խորհրդային Հայաստանի Գիտութեանց Ինստիտուտի զիտական անգամ, հրատարակելով ԲԱՆԻՆԻ ժողովածուի առաջին մեծ հատորը՝ Կաճառի միւս անգամներուն հետ: Էջմիածինը 1924-ին զարձակ կը մասնաւորի նիւթական ծանր կացութեան: Ինքը կը ստանձնէ հանգա-

This page is sponsored by  
MR. & MRS. JACK DADOURIAN

նակութեան գործը եւ կարող կ'ըլլայ հաւաքել 120,000 ուրբի, որով կ'ապահովուի Մայր Աթոռին մէկ տարուան ելեմուտքը:

Կը բարձրանայ (1925-ի ամառը) Արարածի զագաթը, որուն նկարագրութիւնը կ'ընէ ԱՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹԻՆ Ի ԽՆԴԻՐ ԼՈՒՍԻՈՐՁԻ ԿԱՆԹԵՂԻՆ գործին մէջ, որ աւանձին զբքոյիով կը տպագրուի 1941-ին: Գլխաւորն է. Կաթողիկոսի օրով կ'ըլլայ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ եւ Միաբանական Ժողովի նախագահ: Լենինականի մեծ երկրաշարժի (1926) ժամանակ՝ Կաթողիկոսի կողմէ ինք կը զբաղուի աղէտին վայրը՝ ժողովուրդին սիրտ տալու եւ մխիթարելու:

Կ'ընտրուի (1927) առաջնորդ Ռուսաստանի, Խորհի եւ Նոր-Նախիջևանի թեմին: 1932-ին կը նպաստէ Խորհրդային Կաթողիկոսի ընտրութեան յաջողութեան, իսկ ինք կ'ընտրուի Գերազոյն Խորհուրդի անդամ եւ Հայրապետի հրամանով կը նախագահէ անոր նիստերուն:

Կը նշանակուի (1934) Լիազոր Նուիրակ եւ Ներկայացուցիչ Հայրապետի, որովհետեւ այս ելէ հայ զաղութները եւ յատկապէս դարձան Հիւս. Ամբրիկայի մէջ յատուկ կեանք կեդեցական պառակտումը: Յաջորդաբար կ'այցելէ Ռուսաստան, Պոլսի, Վիեննա, Փարիզ, Երուսաղէմ, Եղիպտոս, Լիբանան, Սիւրիա, Իրաք, կրկին Եղիպտոս, Յունաստան, Ֆրանսա, Լոնտոն եւ հուսկ ապա Միացեալ Նահանգներ, իր հետ պտոյններով Աստուծոյ խօսքն ու Մայր Հայրենիքի եւ Մայր Աթոռի սէրը: Կը հանդանակէ 35,000 տուրք, անով նորոգելու համար էջմիածնի Մայր Տաճարը:

**ԱՌՍՁՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՅ**

Գարեղին Արքեպիսկոպոս Ամբրիկա կը ժամանէ 1936 Ապրիլ 8-ին, իրբեւ Հայրապետական Լիազոր Նուիրակ: Թեմի Ազգային Երեսօրհանական Ժողովը Սեպտ. 4, 1938-ին զինք կ'ընտրէ իրբեւ առաջնորդ: Թէև հաստատումը կը յստակ մինչեւ Մայիս 5, 1939, սակայն նոյն տարուոյն Յունիսի սկիզբը ան ետանդագին կը ձեռնարկէ իր պաշտօնին: Կը բառնայ Առաջնորդարանի բարձրագոյն տուրքներու պարտքը, կը հաստատէ ԼՈՒՍԻՈՐՁԻ ԼՈՒՍԱՅԻ եւ Առաջնորդարանի Օժանդակ Միութեան ՄԻ ՏՈՒՄ ԻՒՐԱՔԱՆՁԻՐ ԱՆՀԱՏԷ տարեկան տուրքերը: Ամէն տարի պարբերաբար հովուական այցելութիւններով կը քաջալերէ համայնքները, հողաբարձութիւնները, եկեղեցասէր տիկնանց միութիւնները եւ այս կերպով կը յաջողի այս եւ տալ Թրոյի, Պինկհամթի, Պրիմիթի, Պոստոնի, Լոյսի եւ Ռոթթերֆորտի եկեղեցիներուն պարտաճանաչումները: Կը զնուին նոր եկեղեցիներ եւ իր ձեռքով կ'օծուին Ն. Ֆրյառէֆիոյ, Ուէսթ Ալիսի, Նիւ Պրիմիթի եկեղեցիները: Կը նորոգուին եւ կը բարեկարգուին Փրոպիտէնի, Պոստոնի, Փէթրոսի եկեղեցիները: Կը կառուցուի նահատակ Դուրեան Արքեպիսկոպոսի մատուռը Տիար Հայկ Գալուքեանի ջանքերով, եւ շիրմաքարը կը հոգացուի Դեւոյ Դուրեան Յիշատակաց Տիկնանց օժանդակութեամբ, եւ շիրմաքարին հայկական ոճով զար-

դագրութիւնը կուտայ Առաջնորդ Սրբազան Հայրը: Նախքան առաջնորդ ընտրուելը արդէն օժանձ էր Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցին:

Քառամեայ պաշտօնավարութեան շրջանին այս նիւթական կարեւոր գործերէն զատ՝ աւելի հիմնական եւ աւելի աշխատութիւններով կը բարեկարգէ Առաջնորդական Աթոռը: Կը վերակազմէ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խորհուրդները. — Ուսումնական եւ Տնտեսական: Կը նշանակէ այցելու հովիւներ, կը թափան ահսուչ: Կը հրատարակէ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅԻ պաշտօնաթերթը, կը հաստատէ ժողովրդական Լսարան, Եկեղեցականներու Համագումար, Հոկտեմբեր ամիսը կը հաշակէ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ, եւ կը մըտալրէ հիմնել բարձրագոյն վարժարան մը՝ պատրաստելու համար ուսուցիչներ եւ եկեղեցականներ:

Համազգային քննիչով իր զործերուն մէջ նշանակելի կը մնայ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՆՁՆԱՍԻՈՐԴԻ կազմակերպութիւնը, որ մէկ տարուան ընթացքին շուրջ 120,000 կը հանդանակէ Կարմիր Բանակի եւ պատերազմի աղէտեայ ազգակիցներու համար: Երկրորդ հանդանակութիւն մը կը կատարուի ՍՍՍՌԻՅԻ ԴԱԻԹ ՀՐԱՍԱՅԻՐՈՒ ԶՕՐԱՄԻՒՆԻՆ համար եւ հաւաքուած դումարը կը հասնի 85,000 տուրքի, որուն 25,000 տուրքը Գալիֆօրնիայի հայութիւնը կը նուիրէ:

Կը կազմակերպէ ասոնկատարութիւններ՝ նախընտրած ՍԱՄԱՅ ԵՌԵՐՈՒ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻՆ եւ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԴԻԻՅԱՋՆԱՄԱՐՏԻՆ, ինչպէս նաեւ դեղարուեստական ձեռնարկներ՝ յողուտ Առաջնորդարանի Օժանդակ Միութեան:

Վարչական այլքան բարձրագոյնի ծանր աշխատանք տանելով հանդերձ՝ իմաստուն Առաջնորդը կը լուսաւորէ իր բանասիր հօտը իր հոգեւոր քորոյններով ու հայրենաշունչ բանախօսութիւններով, կը ստորագրէ բարձր մակիւ յողուածներ «Հայաստանայց Եկեղեցի»ի եւ ուրիշ սրբերութեան ընդ մէջ, հիացում ասթելով զինքը շրջապատողներուն ու իր զործակիցներուն, որոնք իրմէ կը ստանային այլազան-եկեղեցական զործերու նուիրուելու ներշնչումը:

Կրկին կ'ընտրուի Կաթողիկոսութեան Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ զինք կ'ընտրէ (Մայիս 10, 1943) Կաթողիկոս: Այդ օրերուն կը մըտածուի ասեւ իր յարեանը: Հանուր Ամերիկայի հայութիւնը սղեւորութեամբ կը պանծացնէ ՄԵՐ ՅՈՒՅՆԱՆԵՐԸ:

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՐԻ ՏԱՆԵ ԿԻՎԻԿԻՈՅ**

Ընարեալ Կաթողիկոսը, պատերազմի հետեանքով, սակցած անապահովութեան պատճառով, հայրի կը կարողանայ 1945 Յունուար 21-ին, պատերազմական բնանատար նստով ճամբորդել զէպի իր Աթոռը: Ծամբուն վրայ կը հանդիպի Եղիպտոս եւ Պաղեստին, ուր կ'արժանանայ մեծ արանքներու: Լիբանան մուտք կը զարձէ Մարտ 23-ին, ուր իրեն կ'ընծայուի սրտական ու ժողովրդական արքայական ընդունելութիւն:

Կաթողիկոս կ'օծուի 1945 Ապրիլ 8-ին, Անթիլիասի Հայոց Կաթողիկոսա-



րանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան պետական տեղական թէ օտար ներկայացուցիչներու եւ ժողովրդեան հոծ բազմութեան: Ապրիլ 22-ին, Սիւրիական Հանրապետութիւնը իրեն կը շնորհէ ՍԻՆՐԻԱԿԱՆ ՄՈՒՄԻՍԹԱԶ բարձրագոյն աստիճանի Պատուոյ Նշանը՝ ի գնահատութիւն իր մատուցած ծառայութեանց:

Անդրանիկ Պատարադը կը մատուցանէ 1945 Մայրիլ 29-ին եւ Յունիս 5-ին կը մեկնի ղէպի էջմիածին, նախագահելու համար Կաթողիկոսական ընտրութեան Պատգամաւորական Ժողովին, որ միաձայնութեամբ Կաթողիկոս կ'ընտրէ Այլընտիր Տեղակալ Տ. Գէորգ Արքեպս. Չէօրէքճեան, որուն օժման կարգը կը կատարէ Գարեգին Կաթողիկոս 1945 Յունիս 24-ին, Ս. էջմիածնի Մայր Տաճարին մէջ, իր շուրջ ունենալով էջմիածնական եւ Կիլիկիան արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ:

Հայաստանի կառավարութեան կողմէ իրեն տրամադրուած օգնանալը՝ իր չբախմբով կը մեկնի Թեհրան, ուր կ'այցելէ Ծահլին, որ մեծապայելու է ընդունելութիւն կը սարքէ ի պատիւ իրեն: Թեհրանի մէջ կ'օժէ նորակասուց Ս. Աստուածածին եկեղեցին՝ Օրոստոս 7-ին եւ կը հասնի Անթիլիաս:

Լիբանանի Հայութիւնը, 1948-ին կը տօնէ իր Յարեւանը՝ սրանձայնելով իր վաթսուներեակ եկեղեցական, զիտական ու դրական գործունէութիւնը, եւ ծննդեան ու վաթսուներեակ ու քահանայութեան Յիսնամեակը: Հանդիսութեանց ներկայ կ'ըլլայ Լիբանանի Նախագահը՝ Վարչապետին ընկերակցութեամբ: Այդ առթիւ իր կուրծքը կը դարձնուի Լիբանանեան ՄԱՅՐԻՒ Ա. ԿԱՐԳԻ շքանշանով:

Իր կաթողիկոսութեան շրջանին՝ Երանաշնորհ Գարեգին Հայրապետ, կը դորացնէ Դպրեմանքը, անոր կողքին բանալով Քահանայից Դասարան մը, և սուպատիկելով աշակերտութեան թիւը եւ հրաւիրելով պատրաստուած դասախօսներ: Յատուկ ուշադրութիւն կը դարձնէ Դպրեմանքէն շրջանաւարտ երիտասարդ եկեղեցականներու համալսարանական ուսումը ջամբելու, եւ ասոր համար խումբ մը խոստովանելի հոգեւորականներ կը զրկէ Ամերիկա եւ Եւրոպա:

Չարկ կուտայ Տպարանին, անոր կողքին հաստատելով կազմատուն մը: Բովանդակալից կը դարձնէ ամսադիր ՀԱՍԿ պաշտօնաթերթը, որուն ծաւալը կը կրկնապատկուի: Կը հրատարակէ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿ ՏԱՐԵԳԻՐԲԸ, պատկառելի բովանդակութեամբ: Կը ստրագրուի ըստմաթիւ զիւրքեր: Կը ճոխացնէ Մատենադարանը:

Կը կազմակերպէ Ժողովրդային Լսարանը, Ուսուցչական Համադրամարներ — ասորեայ զարդներու եւ Կիրակնօրեայ Վարժարաններու, Կաթողիկոսարանի Գեղարուեստական Օր, Հնադիտական եւ Հայ Արուեստի Յուլյահանդէս, Վարդանանց Դիւցադնամարտի 1500 ամեակի Բացման եւ Փակման հանդիսութիւններ: Հոկտեմբեր ամիսը կը հռչակէ Մշակույթի Ամիս: Կը կատարէ եպիսկոպոսական օժուժ, Միւսնորհնէք, կը յաջողան Ներկայիցի նուիրուած հանրանկատութիւնը եւ կ'օրհնէ Հայրենիք վերադարձի նուիրական ձեռ-

This page is sponsored by  
MR. & MRS. HAIK KAVOOKJIAN

նարկը, անձամբ բարձրանալով նաև եւ իրախուսելով ներկայիցի իր զաւակները:

Կը զնէ Յովսէփեան Կալուածը Պէյրութի Ծարա Համրա պողոտային վերայ. վանքի մէջ շինել կուտայ Դպրեմանքի նոր շէնքը՝ Թանգարան-Մատենադարանի յարակից իր բոլոր բաժիններով, նուիրատուութեամբ Կիլիկիայի Կիլիկիական Հիմնադրամին, իսկ Պրոֆ. Մայրիլ մուտքի բարձունքներէն միոյն վրայ՝ 52,000 քառակուսի մեթր տարածութեան վրայ, Կաթողիկոսարանի Ամարանոցը՝ Դպրեմանքի յարակից ընդարձակ շէնքով եւ Մատուցով մը, նուիրատուութեամբ մանչեսթրարեան Մարքոյ Պաքրճեանի եւ Պէյրութահայ Պրն. Երուանդ Տէմիրճեանի:

Կաթողիկոսարանը իր օրով իսկապէս կը դառնայ Մշակույթի Կեդրոն մը: Իր այլևոր տարիքը եւ իր ծրարելներուն հսկայութիւնը նկատի ունենալով՝ կը ծրարէ ճամբորդել ղէպի Եւրոպա՝ հանդիպումներ ունենալու մեծահարուստներու հետ, եւ իր ծրարելները անոնց պարզելու եւ անոնցմէ օժանդակութիւն խնդրելու: Կ'ըլլէ Նիդրլանդ (1950 Մայիս 12), ուր կ'ունենայ սրտի ծանր տուժանք մը Մայիս 9-ին: Բժշկիչներ կը յանձնարարեն վերադառնալ Աթոս, բայց ան կը շարունակէ իր ճամբորդութիւնը: Կը հասնի Եւրոպա եւ Աթոս վարապատնալով կը յօռուի ստեղծագործ աշխատանքի: Երբ կը զբէր յառաջարանը ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿ ՏԱՐԵԳԻՐԲԸ Բ. ՀԱՏՈՐԻՆ, դարձեալ սիրտէն վերաւոր կ'իյնայ անկողին, 1950 Դեկտ. 23-ին: Հիւանդանոցէն կը վերադառնայ Աթոս՝ առողջութիւնը բոս բաւականին վերադառնալ: Տասնութ ամիսներու պարբերական ապաքինումի եւ նոր տաղանդներու շրջանէն ետք, վերջապէս Ան կ'աւանդէ Իր բարի հոյին Աստուծոյ, 1952 Յունիս 21-ին, Ծարաթ առաւօտեան ժամը 5:40-ին: Կը թաղուի 1952 Յունիս 6-ին, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին կից, կաթողիկոսներու զերեկմաններուն յատկացուած անկիւնին, Տ. Սահակ Բ. խապայեան եւ Տ. Պետրոս Սարաճեան կաթողիկոսներու զերեկմաններուն միջեւ:

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

Սոյն կենսագրական զիւրքը ամփոփումն են՝ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐԳԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, ԸՆՏՐԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԼԿԻՈՅ զրբոյկին, որ հրատարակուած է Այնոր Քահանայութեան Յիսնամեակ Յարեւանի տունակատարութեան աթիւ, 1943 թուականին, Ամերիկայի Յարեւանի Կեդրոնական Յանձնաժողովի կողմէ, եւ 1952 Յունիս-Սեպտեմբեր, թիւ 7-9 «ՀԱՍԿ» ամսաթերթին մէջ Երեւան ընդհանուր կենսագրականին, որուն առաջին մասը կը հասնի մինչեւ 1900-ական թուականներու սկիզբը, Տ. Գեղեցիկ Վրդ. (այժմ Եպս.) Փոքրեան զրբ առած է Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսի պատմածէն, 1942 Փետր. 21-ին, Տիգրան Տասուրեանի բնակարանին մէջ, ի Եանքրոս, Նիւ Եորք, եւ որուն երկրորդ մասը, որ կը հասնի մինչեւ Երջանկայիչատակ Գարեգին Հայրապետի վախճանումը, 1952 Յունիս 21, պատրաստած է Հոյ. Տ. Գեղ. Մ. Վրդ. (այժմ Եպս.) ձերեճեան:

This page is sponsored by  
MR. & MRS. DIKRAN MISSIRLIAN

**ՅՈՒՑԱԿ՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՊՈՒԱԾ ԳԻՐՔԵՐՈՒ**

- 1.— ՍՍՍՄԱՅ ԾՈՒԵՐ, Մասունցի Դաւիթ, Ժողովրդական լէպի երկու լարիանոններ, Աբարանի եւ Մսկայ բարբառներով, հրատարակութեան թիֆլիսի Ընկերութեան Հայ Գրքերի Հրատարակութեան, 1932, Ժ+151 էջ:
- 2.— ՓՇՐԱՆՔՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆՆԵՐ, Ժողովրդական նիւթեր, Գիրք Գ., հրատարակութեան թիֆլիսի Ընկերութեան Հայ Գրքերի Հրատարակութեան, 1892, 139 էջ:
- 3.— ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՒ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐԻՆ, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1903, 200 էջ:
- 4.— ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, Թիֆլիս, տպարան Օր. Ն. Աղանանցի, 1908, 30 էջ, և Բ. տպարաններ, թիֆլիս, տպարան Վրաց Հրատարակչական Ընկերութեան, 1911, էջ 54:
- 5.— ԳՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՄԷՉ, Մասն Գ., Քարակչ Հայ Հնազանդութեան, (Հայ Գրի Գիտի 1500 ամեակի առթիւ), Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1913, 52+95 տախտակով:
- 6.— ԽԱՂԲԱՆԵԱՆՔ ԿԱՄ ՊՈՒՇԵԱՆՔ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ, Պատմագիտական ուսումնասիրութիւն, Մասն առաջին, Վաղարշապատ, 1928, ԺԴ+304 էջ:  
Նոյնի Մասն Երկրորդ, Հողերը Կեդրոններ եւ Գլածորի բարձր Դպրոցը Պոռչեանց Իշխանութեան մէջ: (Պատկերած Երուսաղէմի «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան Գրական» մրցանակով), Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1942-1944, 229 էջ:
- Նոյնի Գ. Հատոր, Յաւելուած Ա. Արձանադրութիւններ, Յաւելուած Բ. Յիշատակարաններ, Յաւելուած Գ. Մատենադրական Հատուածներ. (Պատկերած Երուսաղէմի «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան Գրական» մրցանակով) Նիւ Եորք, 1942-1943, երկսիւնակ էջ ԼԱ+248:
- 7.— ՆԻԻԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, Պրակ Ա. 1. Վախտանդ Որդի Ումեկայ, 2. Իդնատրոս Մանրանկարիչ եւ Շոթոսիանց Տոհմը, 3. Հաղարտի Դպրոցի Մի Գլուխ Գործոց (Գետաչէնի Աւետարանը), Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1935, էջ 75:  
Նոյնի Պրակ Բ.— 1. Կոստանդին Ա. Կաթողիկոս, 2. Մի ձեռագիր Աւետարան, 3. Դարձեալ Իդնատրոս Հոսոմոսցի Մանրանկարչի մասին: Նիւ Եորք, 1943, էջ 66:  
Նոյնի Պրակ Գ.— 1. Պաղաւանքը եւ Գմբեթաւորումը Նախնական Հայ Տաճարների, 2. Գերեզմանական Կոթողներ եւ նրանց Հնազանդական Արժէքը Հայ Արուեստի Պատմութեան Համար, (նոյնը անգլերէն թարգմանութեամբ, բնագրի հետ, առանձին հրատարակութիւն) Նիւ Եորք, 1944, էջ 136, անգլերէն բնագրով հրատարակութիւնը, էջ 136+62:

This page is sponsored by  
MR. & MRS. PUZANT PIRANIAN

- Նոյնի Դ. Պրակ, (Մանր Արուեստի Մնացորդներ, Անթիլիաս, 1952-1953 (ընդ մամուլ):
- Նոյնը Պրակ Ե.— 1. Էջմիածնի Տաճարի Նկարազարդումն ու Ծաղկազարդումը Ժէ-ԺԸ. դարերում, 2. Հատուած Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոսի «Դաւթար»-ից, 3. Պատմութեան Ղուկաս Կաթողիկոսի (Մայր Աթոռի Դիւանից), Անթիլիաս, 1951, էջ 63:  
8.— ԿԵԱՆՔԻՍ ԱՄԵՆԱԴԹԱՍՈՍ ՕՐԸ ԵՒ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆՍ ՐՈՊԷՆ, Նիւ Եորք, 1943, և Գոհարէ, 1945:  
9.— ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ, Քարոզներ, դրական-դեղարուեստական եւ իմաստասիրական յօդուածներ: Անթիլիաս, 1947, էջ 326:  
10.— ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԶԵՌՍԳՐԱՅ, Ա. Հատոր, (Ե. դարից մինչեւ 1250 թ.), աշխատակցութեամբ Ս. Սիմոնեանի, Անթիլիաս, 1951, էջ ԻԹ+1265:  
Նոյնի Հատոր Բ. (1251-1300 թ.), աշխատակցութեամբ Սիմոն Սիմոնեանի, Անթիլիաս, 1952-1953 (ընդ մամուլ):  
11.— ՀԱՒՈՒՅ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉԸ, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1937, էջ Ժ+110:

**ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐ**

- ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԶԵՌՍԳՐԱՅ, անտիպ կը մնան առնուազն երկու հատորներ:
- 2.— ՀԱՅ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՄԷՉ: Պէտք ունի լրացման եւ խմբագրման, «Յիշատակարանի Զեռագրաց» ղործի լրակատար օգտագործմամբ:
- 3.— ՔԱՐՏԷԶ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ. Վեհափառ Հայրապետի դրուխ-դործոցը, բազկայած՝ 120 դուրանը մեծ ու փոքր եւ 2500-3000 սեւ մանրանկարներէ: Պէտք է ղրուի ներծական մասը: Օր. Սիբարիի Տէր Ներսէսեանի վերահսկողութիւնը անհրաժեշտ է տպարանութեան ժամանակ:
- 4.— ՆԻԻԹԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, հաւանաբար երեք պրակներ (Զ-Ը), իբրեւ շարունակութիւն տպուած Ե. Պրակի:
- 5.— ՀԱՅ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ (դասաւորելի եւ խմբագրելի):
- 6.— ՔԱՐՈՉՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ:
- 7.— ՕՐԲԵՂԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (անաւարտ):  
Վերեւ առելիք ամփոփ ցուցակը Գարեգին Հայրապետի տպուած եւ անտիպ զիրքերուն: Երջանկայիշատակ Հայրապետը ղրած է նաեւ դիտական, բանասիրական, ղրական, կրօնական եւ եկեղեցադիտական ըստաւորակութեամբ հարկելի աւելի կարեւոր յօդուածներ: Տպուած, անտիպ ղործերուն եւ յօդուածներուն ցուցակը կազմած է Արտակ Եղիսիպոս Սմբատեան:

This page is sponsored by  
MR. & MRS. HAROUTUNE G. TATOSIAN

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Աստուծոյ շնորհած ամենամեծ պարգևեր մեր ժողովուրդին՝ Հայց. Եկեղեցիին է, որի համար մեր հայրերը այնքան սրբաբարեացի են թափած, որ հոգեւթիւնները կատարած: Նա օրհնութիւն է եղել մեր անցեալի մէջ, մեր ապագային եւ հոգեւոր կեանքի պահպանութեան մէջ դարերի ընթացքում. այժմ էլ իւր կարեւոր դերն ունի կատարելու հայ կրօնն ու աստուածապաշտութիւնը՝ տիրուքի հայութեան մէջ վաստակելու՝ հայ հոգու եւ աւանդութեան պահպանման հրեշտակը լինելու: Երախտագէտ լինինք եւ խորապէս դիտակցելով՝ Աստուծոյ այդ շնորհին համար: Երախտագէտ լինինք դիտակցութեամբ զէպի մեր հոգեւոր Մայրը, որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին է: ... Նա մերն է, մեր ապագային եկեղեցին եւ մեր ապագային ամենամեծ ստեղծարարութիւնը, ամենամեծ ժառանգութիւնը մեր նախնեաց թողած:

«Հասկ», 1952 Յուլիս - Սեպտ.

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ ՊԻՏԻ ՄՆԱՅ ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է՝ ՄԵՐ ԱՌԱՔԵԼԱՇԱԽԻՂ ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՁԵՌՔՈՎ

Այս մտքերն ու հանդամանքները կամեցանք փոքր ինչ պարզել պատմական իրողութիւնները եւ հայեացքները վերլուծութեամբ եւ յանձնարարել մեր Սփիւռքի Հայութեան ուշադրութեան, ի նկատի ունենալով որ ոչ խաւերի մէջ երբեմն երեւան եկած թիւր կարծիքները՝ էջմիածնի Հայրապետական Աթոռի իրաւունքները փոխանցելով եւ միացնելով Կիլիկիոյ Աթոռի հետ: Ըստ մեզ այդպիսի մտքերի արծարծումը ոչ միայն հակապատմական է, հայ եկեղեցու ծաղման եւ հաստատութեան աւանդութիւնների եւ հոգու զէմ մեղանջում, այլ եւ վնասակար: Հայց Հայրապետութիւնը պիտի մնայ այնպէս, որ հաստատուած է մեր առաքելաւոր Լուսաւորչի ձեռքով, որտեղ Ներսէս Մեծեր, Մահալ Պարթեւներ, Ս. Մեսրոպներ են դարձել եւ նրանց կողմից կազմակերպուել եւ կենդանի ներդրութեամբ հաստատութիւն դարձել, իբրեւ զեկալար եւ առաջնորդ հայ ժողովուրդի հոգեւոր կեանքի եւ մշակոյթի: Հայրենիքից դուրս աթոռի հաստատութիւնը զժրարել, պատմական հանդամանքները արդիւնք է, եւ ենթակայ օտար ազդեցութիւնների եւ այսպիսի, ինչպէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութիւնն է ցոյց տալիս հէնց թաղաւորութեան կանգուն ժամանակն իսկ:

«Հայց. Եկեղեցի», Յուլիս, 1940

## ՄԻԱՅ ԵԼՔԸ

Մենք չենք կարող իբրեւ Ամենայն Հայց Հայրապետի ներկայացուցիչ, լինել այն եկեղեցիներում, որոնք չեն ենթարկուում վերին իշխանութեան կարգապահութեան, մասնակցել կախարակալ քահանաների եւ նոյն իսկ կարգա-

This page is sponsored by  
GENERAL & MRS. SARKIS ZARTARIAN

լործների ձեռքով կատարած ժամապաշտութեան, եկեղեցական խորհուրդներին, առանց միասնականութեան եւ խանդարուած կարգաւորութեան վերականգման: Տարրական կարգապահութեան եւ օրինական հասկացողութեան թելադրութիւնն է այլ, որ պարզ պիտի լինէր ամենքի համար: Չէինք կարող զործակից լինել այնպիսի երեսփոխանական ժողովի, որ հաստատուած չէր եւ իւր զոյութիւնը շարունակում է առանց Հայրապետական իշխանութեան: ... Ուստի մնում է մի ճանապարհ միայն, որ խոհեմութեան եւ զգաստութեան ճանապարհն է. ինքնաբերաբար լուծել անվաւեր երեսփոխանական ժողովն ու նորանից բղխած կեղծոնական վարչութիւնը եւ եկեղեցիների կառավարութիւնը անպայման կեդրով յանձնել մեզ:

«Հայց. Եկեղեցի», 1940, Յուլիս

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Անշուշտ, Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը մեզ համար նոյնպէս արժէքաւոր է, անբախտելի մասն է այն Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջութեան, ինչպէս Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ պատրիարքութիւններն են, իրենց ներքին եւ տեղական ինքնիշխանի նկատմամբ անկախ, բայց դաւանաբանական-ծիսական եւ արտաքին եկեղեցիների հետ ունեցած յարաբերութեան մէջ ենթակայ ամբողջութեան դրուի Հայաստանեայց Ընդհանրական, կամ ինչպէս սովորական է դարձած սեւել, Ամենայն Հայց Կաթողիկոսին: Վերոյիշեալ մեծ աթոռների դահալաները զործակից են Ընդհանրական Հայրապետին եկեղեցական կարեւորագոյն ինքնիշխանի մէջ, բայց սա է ազլային-եկեղեցական մեծ ժողովների նախապահը, հրաւիրողն ու կազմակերպողը, կանոնական որոշումների հրատարակողն ու հարկաւոր ժամանակ լուսարանողը, մեր եկեղեցական միութեան զլուրը:

«Հայց. Եկեղեցի», Յուլիս, 1940

## ՆԱՀԱՏԱԿԱՅ ՏՕՆ

Մեր ժողովուրդի առաջաւորները, եպիսկոպոսներն ու վարդապետները, մտաւորականներն ու մատենագիրները խորհուրդեցան անյայտ վայրերում, որոնց վրակները մնացին անթաղ, «ցամաքեցան» եւ փոշիացան անապատների եւ դաշտերի մէջ: Աւերակների վերածուցանման մեր եկեղեցիներն ու վանքերը, ճարտարապետական կոթողները, բարեղն քաղաքներն ու զիւղերը անբնակ, մշակութային գանձերը կոյուստուցան կամ ոչնչացան: Արմատախիլ եղան ժողովրդական բանահիւսութեան, երգերի եւ աւանդութիւնների, ժողովրդական բանահիւսութեան, երգերի եւ աւանդութիւնների, ժողովրդական արուեստի հիմունքները, որոնք պրիւրներն են ամենայն ժողովրդի յառաջումութեան, եւ ապագային ստեղծարարութեան, լեզուի կենդանի պահպանութեան եւ հարստութեան: Սովից, սրից, հիւանդութիւններից ապաստուած մընացորդ՝ Հայաստանի, Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ հայութեան, ցրուեցաւ աշխարհի ամէն կողմերը:

This page is sponsored by  
MR. & MRS. ONNIG TABIBIAN

